ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՎԱՆՑԻ

ՔԱՐՈԶ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՄԱՍԻՆ

«Եթե մեկն ինձ ծառայի, իմ ետևից կգա» (Հովհ. ԺԲ 26)

Հարազատ որդուն հատուկ է նմանվել իր հորը: Հավատարիմ զինվորին՝ հետևել զորքի գլխավորներին: Եվ իմաստուն ծառային՝ սպասավորել և կատարել իր Տիրոջ կամքը: Այսօր հարազատ որդին՝ Հիսուս, ինքն իր մեջ նրան (Աստծուն) նմանվելով, հանձն առավ խաչը և գնաց Հոր մոտ, և իր Վարդապետը, լսելով նրա ձայնը, թե «ով ինձ պիտի ծառայի, իմ ետևից պիտի գա, և ով կամենում է իմ ետևից գալ, թող իր անձը ուրանա, վերցնի իր խաչը և գա» (Հովհ. ԺԲ 25-26), այսօր հավատարիմ զինվոր Սուրբ Ստեփանոսը, թշնամու դեմ խիզախորեն մարտի գնալով և հաղթելով, հետևեց զորագլուխ Հիսուսին, որի համար պսակի արժանանալով՝ բազմեց նրա աջ կողմում: Լսելով, թե նայե՛ք (հավատացյալների) զորագլուխ Հիսուսին, «որ մխիթարության փոխարեն, որի առջևում էր, հանձն առավ խաչը» և այլն: Այսօր Քրիստոսի իմաստուն ծառա Սուրբ Ստեփանոսը, ամբողջովին ծառայելով իր Տիրոջը, դարձավ նրա կամքը կատարողը, որի համար էլ հոտի Տերը կանգնելով, փառավորում էր նրան:

Ուրեմն որտեղ հայրն էր, այնտեղ և որդին էր, որտեղ զորագլուխն է, այնտեղ և զինվորն է, որտեղ Տերն է, այնտեղ և ծառան պատվի և փառքի արժանացավ: Ըստ այնմ, թե «եթե մեկը պիտի ծառայի, իմ ետևից պիտի գա, որտեղ ես եմ, այնտեղ և նա է» (Հովհ. ԺԲ 26): Արդ՝ այս հարազատ որդիս և իմ իմաստուն զինվոր Սուրբ Ստեփանոսը իր վարքով միայն իրեն չէ, որ արժանացրեց փառքի պսակի և ուրախացրեց: Այլ նաև իր Տեր և Ուսուցիչ Քրիստոսին և Նրա եկեղեցուն, հրեշտակների դասերը, Ադամին և բոլոր նրանից ծնվածներին: Քանի որ անունը կոչվում է պսակ, այդ պատճառով ամենքին պսակ և ուրախություն եղավ: Որի համար (և) շարականն ասում է. «այսօր քարի նահատակ եղար մեր մեջ (Շրկ., էջ 63-64), այսինքն՝ ամենալավ շնորհ ե չլսված հանդեսներ ստեղծեցիր և իբրև մի անմահ ծաղիկ՝ փայլեցիր աշխարհի մեջ և բոլորին ուրախացրիր:

Քանի որ Քրիստոս խաչվեց և իր արյունը հեղեց մեզ համար, մեզ պատգամ թողեց՝ ասելով. «Եթե մեկն ինձ պիտի ծառայի, իմ ետևից պիտի գա» (Հովհ. ԺԲ 26), այսինքն՝ ես արյունով ձեզ գնեցի, և դուք պիտի գաք իմ ետևից և ապա՝ «այն տեղը, ուր ես եմ, այնտեղ և դուք ինձ հետ պիտի լինեք, իմ արքայության մեջ» (Հովհ. ԺԲ 26):

Մինչև այսօր Քրիստոս ակնդետ մնում և սպասում էր, թե կգտնվի՞ արդյոք մարդկանցից մեկը իր ձայնը լսող. թերևս զուր եղավ իր արյան հեղումը: Ահա Սուրբ Ստեփանոսն առաջինը լսեց և արդյունավորեց Քրիստոսի արյունը, որին

(Ստեփանոսին) և հետևեցին ուրիշները: Քանի որ նա հետևեց Քրիստոսին, ուրիշներն էլ՝ նրան: Նա Քրիստոսից բացի ուրիշ նախատիպ չուներ, և ոչ մեկը Քրիստոսի անվան համար արյուն չէր հեղել, ուստի (և) նա եղավ կամուրջ, օրինակ և առաջնորդ բոլոր նահատակներին, որոնք Քրիստոսի համար հեղեցին իրենց արյունը: Ինչպես ասում է շարականը. վկաների ուղին Քրիստոսից հետո գտնվեց (Շրկ., էջ 64): Ապա արդարև ասում է. փառք, պսակ և ուրախություն Քրիստոսին և նրա մարդեղությանն ու խաչելությանը: Բարի նահատակ եղավ: Դարձյալ առաջին Ադամը, առաջին Անդրանիկ որդու ծնվելու ժամանակ, ուրախանալով ասում է՝ մարդու միջոցով ստացա (նրան), նույնպես և երկրորդ Ադամը՝ Քրիստոս, Ստեփանոսի (ծնվելու) ժամանակ ուրախանալով ասում է՝ իմ այս մարդեղությամբ ստացա առաջին և Անդրանիկ զավակը:

Դարձյալ Քրիստոս ուներեցավ աշխարհն իրեն այգի և այնտեղ կանգնեցրեց խաչը, որը ծառոգեց իր արյունով և որից պտղաբերություն էր ակնկալում: Վաղահաս պտուղ Ստեփանոսը, կախվելով խաչի վրա, այսօր սկսեց հասունանալ: Որը (այն) Քրիստոսի համար ուրախություն է: Այնուհետև Սուրբ Ստեփանոսը դարձավ Քրիստոսի հարս եկեղեցու պսակն ու ուրախությունը: Եվ ինչպես որ պտղաբերությունը այգիների և ծառերի ուրախությունն ու պսակն է, նույնպես և մոր ուրախությունն ու պսակն է ծնունդը, ըստ այնմ, թե՝ մայրը որդիներով է ուրախանում: Որովհետև ինչպես ծառերի անպտղությունը թերություն և անարգություն է և ըստ ավետարանական խոսքերի անիծվում է, նույնպես և մոր՝ ամլությունը: Սառան և Աբրահամն ասում էին. «Ի՞նչ է լինելու մեզ (հետ), որովհետև կորչում ենք անզավակ», իսկ Իսահակի ծնվելու ժամանակ մեծ ուրախություն ունեցան: Ռաքելն ասում է Հակոբին. «Տո՛ւր ինձ որդի, եթե ոչ՝ կմեռնեմ» (Մնդ. Լ 1): Իսկ Հովսեփի ծնվելու ժամանակ ասում է. «Տերը վերացրեց իմ նախատինքը, իմ ամուսինն ինձ պիտի սիրի, որովհետև նրան զավակ պարգևեցի» (Հմմտ. Մնդ. Լ 23): Անանան լալիս էր և տխրում, ապա Սամուելի ծնվելու ժամանակ «Նրա երեսներն այլևս չտխրեցին»: Այդպես և ուրիշները, այդպես և Քրիստոսի հարս սուրբ եկեղեցին, լինելով ամլության մեջ, մեծ տրտմություն էր ապրում, որովհետև չկար սեր՝ ընծայելու իր փեսա զավակ Հիսուսին: Մինչ Սուրբ Ստեփանոսը (եկեղեցին) չուներ տոնելի սրբեր, որոնցով ուրախանար: Այսօր, ահա, բացվեց ամուլ արգանդը, և ծնվեց Անդրանիկ որդի Սուրբ Ստեփանոսը, որը նախընտրելի եղավ, քան Իսահակը և քան մյուսը: Ըստ Նարեկացու՝ Անդրանիկ որդին (Ստեփանոսը) երկրորդ Ադամի (Հիսուսի) փրկության գործի շարունակողը դարձավ: Որի համար Եսային գոչում է. «Ուրա՛խ եղիր, ամուլ, որ չէիր ծնում»: Ուստի այսօր ուրախանալով ասում է. «Ինձ պիտի սիրի իմ փեսա Հիսուսը, որովհետև նրան որդի ծնեցի, և իմ ամլության նախատինքը վերացավ»: Համաձայն շարականի՝ ցնծում է Աստծու եկեղեցին, քանի որ իրեն վայել տոնն է այսօր (Շրկ., էջ 67): Ինչպես երկնքի լուսատուները, ծառերի պտուղները, պարտեզների ծաղիկները, ծնողների զավակները պսակ են և ուրախություն, նույնպես և եկեղեցու սրբերը: Եվ ինչպես Սամուելի ծնունդը Աննայից, ասում է (Սբ. Գիրքը) . «Մնեց ամուլը յոթ, և բազմածինը նվազեց, որովհետև

նրանից հետո ծնեց մյուսներին, նույնպես և Ստեփանոսին ծնելիս, ե ուրիշ սրբերին ծնելով՝ եկեղեցու համար բազմացան, իսկ սատանայի (համար)՝ նվազեցին, որի պատճառով ասում է. բանասարկուն քեզանով վիրավորվեց (Շրկ., էջ 64): Այնուհետև, թեպետ բոլոր պտուղներն են գովելի և բոլոր ծաղիկները՝ բուրալի, բայց առավել գովելի և քաղցր է վաղահասն ու հասունացածը. ուստի դրանք ընծայվում են թագավորներին: Այդպես և մոր բոլոր զավակներն են սիրելի և քաղցր, սակայն առաջնեկն առավել (սիրելի և քաղցր) է, որը բացում է ամուլ արգանդը: Այսպես թեպետև եկեղեցու բոլոր սրբերն են սիրելի և պանծալի, բայց Սուրբ Ստեփանոսն է առավել քաղցր ու սիրելի, քան մյուսները, որովհետև եղավ Անդրանիկն ու առաջնեկը, որի համար (նա) ընծայվեց երկնավոր թագավոր Հիսուսին, ըստ այնմ՝ «Մտի՛ր խորհրդի վերնատունը»: Եվ փառաբանություն Սուրբ երրորդությանը, որ ընդունեց իր վկաներին:

Ինչպես նաև Սուրբ Ստեփանոսը պսակ և ուրախություն եղավ հրեշտակների դասին: Քանի որ մարդու ընկնելու և անարգվելու պատճառով հրեշտակները մեծ տրտմության մեջ էին, և վերստին խռովվեցին ու վրդովվեցին անառակի տնօրենության և (Տիրոջը) խաչելու խնդրում: Եվ նրան սիրով ընդունեցին, ինչպես հայտնի է Ավետարանի առակից: Այսօր Սուրբ Ստեփանոսը վերացրեց առաջին տրտմությունը՝ լինելով առաջնորդն ու նախակարապետը անառակ (որդու) վարքի վերստին հայրենի տուն դառնալուն, ըստ շարականի, թե՝ հայրենի ավանդությանը ժառանգորդ եղավ, իսկ ուրիշներին՝ առաջնորդ: Նույնպես վերացրեց (Ստեփանոսը) խռովությունը, որ ունեին Քրիստոսին խաչելիս: Անառակ (որդու) մասին ասում է (Գիրքը). «Քո այդ անառակ որդին, որ պոռնիկների հետ իր կյանքը անցկացրեց, մորթեցիր պարարտ եզը և սիրով ընդունեցիր նրան»: Քանի որ այսօր Սուրբ Ստեփանոսը նահատակության նորահրաշ հանդեսով առաջինը հիացրեց երկնային բոլոր տերություններին և իր քաջությամբ փառաբանեց Քրիստոսին և հոժարությամբ հեղեց իր արյունը՝ վճարելով Քրիստոսին արյան պարտքը: Որի համար Քրիստոս, բացելով երկինքը և ոտքի կանգնելով, ցույց էր տալիս հրեշտակներին՝ ասելով, թե՝ «տեսե՛ք, ինչպիսի արդյունք տվեց իմ արյունը, և զուր չհեղեցի (այն) մարդկանց համար»: Եվ ոչ էլ անտեղի եղավ իմ սերը մարդուն: Ես վերցրի մարմնի փորձը, թե որքան դժվար է արյան հեղումը, տեսե՛ք, որ իզուր չսիրեցի մարդուն, որ իմ անվան համար նա հոժարությամբ հեղեց իր արյունը, ինչը դուք չեք կարող: Տեսե՛ք իմ ծառային և իմ նախահայր խաչի պտուղը, որ մարմնի մեջ (առավել) ուժգին է փայլում, քան դուք: Որի համար արժանի է պսակի: Ուստի և նրանք սկսեցին ուրախանալ՝ ըստ շարականի. հրեշտակների դասերն այսօր... և այլն: Սուրբ Ստեփանոսը նաև մեծ ուրախություն, պարծանք և պսակ եղավ Ադամին և նրա սերունդներին, քանի որ ոչ միայն Ադամն ինքը զրկվեց երկնային վայելչությունից, այլև երկինքը փակվեց նրա և սերունդների առջև, որ սերովբեները հսկում էին արքունությամբ, ուստի ինքն իջավ դժոխք՝ քարշ տալով իր հետ սերունդներին: Եվ նրա սերունդներից չկար մեկը, որ բացեր երկնքի դուռը և ներս մտներ: Աճա այսօր Սուրբ Ստեփանոսը զվարճությամբ, բարձրաձայն ավետիս էր տալիս Ադամին և նրա ողջ սերնդին, թե՝

«ահա տեսնում եմ բացված երկինքը», դեպի ուր ինքը մտավ ե բոլորին նրավիրեց այնտեղ՝ ասելով. «Եկե՛ք իմ ետևից, որովհետև մահն ընկավ հաղթությունից, և քաջալերվե՛ք, քանի որ ես հաղթեցի մահին, երկինք գնացի և ձեզ (համար) նահապարհ հարթեցի» (նմմտ. Հովհ. ԺԴ 33): Ինչպես (որ) ասում է. բացվեց երկինքը, որն Ադամը փակեց ե (իր) հայրենի վիճակի ժառանգորդը դարձավ, իսկ ոմանց՝ նահապարհ բացող և առաջնորդ: Որի համար և շարականն ասում է. նախաստեղծը պայծառացավ, և բանսարկուն վիրավորվեց (Շրկ., էջ 64): Քանզի Ադամն ասաց. այսօր Աստված որդի պարգևեց:

Ուստի և հավատացյալների ոգջ դասը ե Սիոնի նոր մանուկները, հրեշտակների և մարդկանց հետ ձայնակցելով, այսօր մեծ ուրախությամբ տոնում են Սուրբ Ստեփանոսի տոնը՝ իրեն պսակող Հիսուսի փառքի մեջ: Քանի որ այս երանելին, ինչպես ասացինք, բոլորի ուրախությունը և պսակը եղավ: Քանի որ երեկ նշեցինք (այն) Դավթի տոնը, որ սպանեց մարմնավոր Գողիաթին՝ հին քարոզի նախատիչին, ապա այսօր տոնում ենք Սուրբ Ստեփանոսին, որ սպանեց անմարմին Գողիաթին՝ մարդկային բնության նախատիչին և թշնամուն:

Քանի որ, - ասում է Սուրբ Գիրքը, - Գողիաթը հսկա և հուժկու տղամարդ էր, ամեն օր կանչում էր Իսրայելին, թե «ինչո՞ւ եք վատնում ձեր ուժերը, տվե՛ք ինձ միայն մեկին, և ես ու ինքը (պիտի) կռվենք, ով հաղթի, նրանը կլինի հաղթանակը» (նմմտ. Ա Թագ. ԺԷ 8-10): Իսկ Իսրայելն ընկել էր մեծ սարսափի և տարակուսանքի մեջ, որովհետև ոչ մեկը չէր համարձակվում Գողիաթի հետ հակատ տալ: Եվ միմյանց ասում էին, թե «տեսնում եք (թշնամի) այն այլազգիներին, որ եկնում են նախատելու Իսրայելին և Աստծու բանակը»: Եթե գտնվի մեկը, որ սպանի նրան, արքան նրան շատ կմեծարի, իրեն փեսացու և անվանի կդարձնի: Այն ժամանակ մանուկ Դավիթն առաջ գալով՝ ասաց. «Ո՞վ է այն անթլպատ այլազգին, որ կհամարձակվի նախատել Աստծու բանակը» (Ա Թագ. ԺԷ 36): Եվ այն, որ մի քարով խփեց նրա հակատին, սրով կտրեց նրա գլուխը և եղավ շատ անվանի: Այսպես և անմարմին Գողիաթը հսկա էր և ուժեղ մարդկային բնության մեջ և միշտ վիրավորում էր Աստծու պատկերը և զոռոզանում ու պարծենում էր՝ ասելով. «Ինչո՞ւ եք ամենքդ կորչում դժոխքում, ձեր միջից ինձ մի մարդ ընտրեք» (Ա Թագ. ԺԷ 8): Եվ բոլորը վախենում էին և չէին համարձակվում: Եվ ասում էին, եթե գտնվի մեկը, որ հաղթի նրան... և այլն: Իսկ մանուկ Ստեփանոսն առաջ գալով ասում է՝ ո՞վ է: Եվ մեկ քարով (թշնամին) խփեց նրա (Ստեփանոսի) հակատին, որն ասաց. «Ահա տեսնում եմ երկինքը բացված» (Գործք Է 55), և գլխահակ գետին ընկավ, որովհետև մինչ այդ (Ստեփանոսի մահը) մեռնողների (համար) բաց էր դժոխքը: Եվ ապա սրով կտրեցին նրա գլուխը, ով ասաց. «Տե՛ր, Հիսուս, ընդունի՛ր իմ հոգին» (Գործք Է 58): Քանի որ այսպիսի ձայնը (երբեք) սատանան չէր լսել, որովհետև ովքեր մեռնում էին, նրանց հոգիներն ուղարկվում էին դժոխք, և սատանան (դրանց) տիրում էր: Այս պատճառով էլ իշխանությունը (սատանայի) հիմնովին փլուզվեց, և ինքը (Ստեփանոսը) մեռավ սատանայի սրով, այսինքն՝ քարերով: Նա պսակով զարդարվեց և ջախջախեց սատանայի գլուխը: Փակվեց դժոխքը, և երկինքը բացվեց, որի համար երկնավոր թագավորից մեծարվեց և

անվանի եղավ Աստծու սրբերի մեջ: Եվ ըստ շարականի՝ Կովեցիր թշնամու դեմ... և այլն:

Ինչպես և Դավիթը, որ սպանեց Գողիաթին, ոչ միայն ինքը փառավորվեց, այլև ուրախացրեց ողջ զորագունդը և (այն) զորեղ դարձրեց՝ տապալելու Գողիաթի զորքին: Նույնպես և Սուրբ Ստեփանոսը, հաղթելով սատանային, ոչ միայն ինքը փառավորվեց, այլև ուրախացրեց և զորեղացրեց Աստծու բանակը՝ հաղթելու սատանայի ուժերին: Այսքանից հետո ավելացան վկաները և ջախջախեցին սատանայի գլուխը: Քանզի լսեցին առաքյալները և մյուս վկաները. թե մեռավ մանը, և միայն ստվերը մնաց:

Վկաների հանապարհը Քրիստոսից հետո գտնվեց և բարի նախաշավիղ եղավ ողջ աշխարհին (Շրկ., էջ 64):

Դարձյալ Դավիթը Գողիաթին քարերով սպանեց և պսակվեց Սավուղ թագավորից: Անհրաժեշտ էր և նրա (Ստեփանոսի) սպանվելը սատանայի քարերով՝ պսակին արժանանալու, որի համար և քարկոծվեց: Ուստի քարերի առատությունը, որպես ծաղիկներ, փշերի փոխարեն հավաքելով պսակ են կազմում: Դարձյալ Քրիստոս Անդրանիկ որդին էր, պարտավոր էր իր հոր պարտքը վճարել, որովհետև կամեցան Քրիստոսին քարկոծել, բայց չկարողացան: Եվ սա քարկոծվելով լրացրեց Քրիստոսի (կրած) չարչարանքների պակասը: Երբ վաղաճաս պտուղ էր խաչի վրա, բոլորը ջանում էին քարով գետին թափել: Երբ գեղեցիկ ու վաղաճաս ողկույզ էր, ջանում էին քարով ճզմել, ուստի՝ խաչին գամվեց: Երբ լեցուն էր ցորենի հասկը, քարով աղում էին՝ լցնելու Քրիստոսի շտեմարանը: Երբ պատրաստ էր երկինք բարձրանալու, սանդուղքի համար քարեր էին պետք: Իսկ Սուրբ (Ստեփանոսի մահվան) ժամանակի լրանալուն, երկիրը զարդերով էր պարուրում՝ առաքելու (երկնային) հանդիսության: Որի համար և նա պսակվում էր պատվական քարերով, իսկ երկինքը բացված հանապարհ էր հարթում՝ ընդունելու նրան որպես քաջ զորապետ, որ գալիս էր պատերազմից՝ թշնամուն հաղթած:

Քանի որ հարսանիքի, փեսայության և հաղթության օր էր, ուստի երկնայիններն ու երկրայինները պսակում էին նրան՝ երկնայիները՝ լուսեղեն պսակով, իսկ երկրայիններն՝ պատվական ակներով: Ուստի Սողոմոնը հիացած ասում է. ելե՛ք և տեսե՛ք Ստեփանոսի պսակը նորահանդեսում: Այնտեղ կարելի էր տեսնել զարմանահրաշ տեսարան, որովհետև երկնայիները, մինչ (Ստեփանոսը) չէին տեսել նման բան և չէին ընդունել երկրից նման մեկին, ուստի պատրաստվում էին ընդունել նրան ըստ արժանվույն: Եվ երկրավորները, մինչ (Ստեփանոսը) չէին ուղարկել որևէ մեկին երկինք, ուստի մտահոգված էին, թե ինչպես պիտի ուղարկեն: Մեծ էր հանդիսությունը: Քանի որ Քրիստոսի Անդրանիկ որդին գալիս էր պատերազմից՝ պսակվելու, ուստի երկինքն ու երկիրը հանդիսավոր տեսք էին ստացել՝ Հորը և Որդուն պատվի արժանացնելու: Քանի որ Քրիստոս ոտքի էր ելել (դիմավորելու), ուրիշներն ինչպե՞ս կարող էին անտարբեր մնալ: Ստեղծվածների մեջ մեծ վեճ և տարաձայնություն եղավ այսօր: (Այն պատճառով), իբր թե իրոք Քրիստո՞սն էր շատ սիրում Ստեփանոսին, թե՞

Ստեփանոսը՝ Քրիստոսին: Քրիստոսը ճայրերից էր պատմում, իսկ նա՝ Քրիստոսից: Մեկը մյուսին գերազանց: Դարձյալ Քրիստոս ասում է. Ստեփանոսի նահատակությունը ինձ (համար) ավելի մեծ պարծանք եղավ, քան իմ խաչելությունը՝ Ստեփանոսի (համար): Իսկ Ստեփանոսը դրա դիմաց պատասխանում է: Այսպես՝ Քրիստոսի և երկնայինների աչքն ու միտքը երկրի վրա, իսկ Ստեփանոսինը՝ դեպի երկինք, նրանք սրան (Ստեփանոսին) էին ցանկանում տեսնել, որովհետև վաղաճաս էր պտուղը: Նա (Ստեփանոսը) ցանկանում էր (տեսնել) նրանց, որովհետև պսակն էին պատրաստում և դուրս էին գալիս փառքով ընդունելու: Այսպես ամբողջ երկնային զորքով Քրիստոս թագավորը Սուրբ Ստեփանոսին ընդառաջ դուրս գալով, նրան մեծ փառքով ընդունեց վերին երուսաղեմում, անճառելի փառքի մեջ: Որին և նույն Քրիստոս Աստված բոլոր հավատացյալներին կարժանացնի: Օ՜հ, հարկավո՜ր է խորհել: Որովհետև եթե արդարների համար է երկինքը բացվում, ապա Քրիստոսն է հրեշտակների հետ դուրս գալիս (նրանց) ընդառաջ՝ փառավորելու և պսակելու, իսկ եթե մեղավորի՝ սատանան է յուրայիններով դուրս գալիս՝ չարչարելու և տանջելու: Եվ նա (մեղավորը) տեսնում է դժոխքը բացված, իսկ պսակի փոխարեն պատրաստված տանջարաններ, որից Քրիստոս (մեզ) բոլորիս փրկելու է:

Գրաբարից թարգմանեց
Հրանտ սրկ. Պետրոսյանը